ԼՐԱՄՇԱԿՎԱԾ ՆԱԽԱԳԻԾ

Պ-1131[4]-01.08.2025-ՏՏԳՇ-011/0

Տեղեկանք փոփոխվող հոդվածների վերաբերյալ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Տեղական ինքնակառավարման մասին» 2002 թվականի մայիսի 7-ի ՀՕ-337 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 45-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել նոր 17-րդ եւ 18-րդ կետերով.

«17) տալիս է համայնքի տարածքում կենդանիների վաճառքի թույլտվություն.

18) տալիս է կենդանիների մասնակցությամբ միջոցառումների, ցուցադրությունների, մրցույթների կազմակերպման թույլտվություն:»:

Հոդված 2. Օրենքի 49-րդ հոդվածի 1-ին~~առաջին~~ մասի 2-րդ կետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. ~~Օրենքի 50-րդ հոդվածի առաջին մասը լրացնել նոր 7-րդ կետով.~~

~~«7) սահմանում է համայնքի տարածքում անկած կենդանիների դիակների հավաքման, ոչնչացման եւ թաղման վայրերը:»:~~

~~*Հոդված 4.*~~ Օրենքը լրացնել նոր 50.1-ին հոդվածով.

«Հոդված 50.1 Համայնքի ղեկավարի լիազորությունները կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում

1. Համայնքի ղեկավարը կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի ոլորտում

իրականացնում է հետեւյալ սեփական լիազորությունները.

1) կազմակերպում է համայնքի տարածքում թափառող կենդանիների համար նախատեսված կացարանների և հարակից ենթակառուցվածքների (ախտորոշիչ լաբորատորիա, անասնաբուժական կենտրոն, վիրահատարան և այլն) նախագծումը, կառուցումը և կառավարումը, այդ թվում նաև արտապատվիրակման կամ համայնք-մասնավոր համագործակցության ձևաչափով, եթե համայնքը ներառված է լիազոր մարմնի սահմանած ցանկում.

2) կազմակերպում է համայնքի տարածքում թափառող կենդանիների բռնման, կենդանիների կացարաններ տեղափոխման աշխատանքները.

3~~2)~~ սահմանված կանոններին համապատասխան՝ տալիս է համայնքի տարածքում տնային կենդանիներ պահելու թույլտվություն եւ կատարում է դրանց ամենամյա հաշվառում.

4) ~~3) իրականացնում է համայնքի տարածքում պահվող կենդանիների նույնականացման անձնագրերի տրամադրումը եւ~~ աջակցում է անասնաբուժական գրանցամատյանների աշխատանքների վարմանը.

54) սահմանված կարգով տրամադրում է կենդանիների բուծարանների եւ կացարանների գործունեության թույլտվություններ.

65) ~~երեքից ավել շուն պահելու համար տալիս է համաձայնություն:~~

~~2. Համայնքի ղեկավարը «Կենդանիների նկատմամբ պատասխանատու վերաբերմունքի մասին» օրենքի պահանջների պահպանման նկատմամբ պետական վերահսկողության բնագավառում իրականացնում է հետեւյալ սեփական լիազորությունները.~~

~~1.~~ օրենքով սահմանված կարգով իրականացնում է անխոչընդոտ վերահսկողություն եւ ստուգումներ կենդանիների պահման բոլոր վայրերում.

7)2. կենդանի տիրապետողից պահանջում եւ ստանում է կենդանի պահելուն առչնվող ցանկացած տեղեկատվություն, բացատրություններ եւ փաստաթղթեր:»:

***Հոդված 45*, Եզրափակիչ մաս և անցումային դրույթ**

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2.Սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո համայնքի ղեկավարի՝ սույն օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետով նախատեսված լիազորության իրականացման համար համայնքներին կտրվի սուբվենցիա, իսկ երկրորդ և հաջորդող տարիների համար դրանց ֆինանսավորումը կիրականացվի համայնքային բյուջեներից: